## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

*Մի հանելուկ։ Ցայտնի է որ* «Баку» *թերթը հրատարակւում է նոյն քաղաքում, ուր և Աղայեվի «Հէյաթ»-ը։ Այս վերջինի № 3-ում (յունիսի 10-ին) տպուած էր «Արաբների խառնակութիւնների» մասին մի յօդուած։ Չնայած որ* «Баку»*-ի քթի տակ է լոյս տեսնում Թուրք թերթը, մինչեւ յուլիսի 28-ը, այսինքն համարեա ամբողջ ամիս ու կէս, այդ ռուս լրագրի աշխատակից* ЭНЭНЪ*-ը ոչ մի տող չի գրում յիշած յօդուածի մասին և միայն այն ժամանակ է գրիչը ձեռք վերցնում, երբ լոյս է տեսնում «Մուրճ»-ի № 7 եւ ստացւում Բագւում… Եւ նա գրում է* «Арабы и Турція» *յօդուածը* «Баку» *լրագրում (№ 90) առանց մի խօսք ասելու թէ ի՞նչ աղբիւրներից է քաղած իր գրուածքի նիւթը… Գրական էթիկայի մասին տարօրինակ հասկացողութիւն ունի այդ* ЭНЭНЪ*-ը…* «Тифлисс. Листокъ» *լրագիրն էլ գրեց նման յօդուած, սակայն նա իր պարտքը համարեց յիշել աղբիւրը…*

**Ժամ. խմբագիր՝ Լ. Սարգսեան**
**Հրատարակիչներ՝ Վ. Քանանեան**
**եւ Լ. Սարգսեան**